ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Կոտայքի մարզ գ.Արամուս, Հեռ. (0222) 6-01-57

N 236

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

17 դեկտեմբեր 2013թ.

Մեծարգո մարզպետ.
Համաձայն "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջների, Ձեզ է ներկայացվում Արամուս համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 19 արտահերթ նիստի որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ *Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

Կատ.՝ Մ. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 57

13/12/2013

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 19 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 19 արտահերթ նիստի օրակարգը.

1. Արամուս համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2014 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին.

2. Արամուս համայնքում 2014 թվականի ընթացքում նոր ծնված հաշվառված երեխաների ընտանիքներին դրամական օգնություն տալու մասին.

3. Արամուս համայնքում 2014 թվականի ընթացքում համայնքի բնակչի մահվան դեպքում մահացողի ընտանիքին դրամական օգնություն տալու մասին.

4. Արամուս համայնքում հաշվառված 1-ին կարգի հաշմանդամներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերաններին 2014 թվականի ընթացքում ամենամսյա դրամական օգնություն տալու մասին.

5. Արամուս համայնքում 2013-2014թթ.-ի ուսումնական տարում պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում (ԲՈՒՀ) գերազանց սովորող ուսանողներին և ավագ դպրոցի 11-12-րդ դասարանների գերազանցիկ աշակերտներին դրամական օգնություն տալու մասին.

6. Հայաստանի Համայնքների միություն իրավաբանական անձանց միությանը անդամակցելու մասին.

7. Արամուս համայնքի սոցիալապես անապահով խավին աջակցություն ցուցաբերելու մասին.

8. Արամուս համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին.

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ԵՂԻՇՅԱՆ ԱՇՈՏ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԳՈ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 58-Ն

13/12/2013

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7, 8, 9,10 և 11-րդ հոդվածների պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Արամուս համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2014 թվականի դրույքաչափերը համաձայն N 1 և 2 հավելվածների.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ԵՂԻՇՅԱՆ ԱՇՈՏ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԳՈ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ծ/Պ ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 1
Արամոս համայնքի ավագանու
2013 թ. դեկտեմբերի 13-ի N 58-Ն որոշման

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար՝

1)հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15 000 դրամ.

2) սույն հավելվածի «1» կետի ,«1» ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ

դ. 3001-ից ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 100 000 դրամ

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն 3000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի

գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ,մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 դրամ:

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ.

ա. համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերման և իրացման դեպքում՝ 5000 դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերման և իրացման դեպքում՝ 500 դրամ

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար յուրաքանչյուր տարվա թույլտվության համար՝ 50.000 դրամ:

7. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների, բաղնիքների (սաունաների), խաղատների՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 30.000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 250.000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500.000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300.000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ,

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ, կրկնօրինակներ տրամադրելու համար, ընթացիկ տարվա համար՝ 3000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000/հիսուն հազար/ դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10.000 դրամ:

Հավելված N 2
Արամոս համայնքի ավագանու
2013 թ. դեկտեմբերի 13-ի N 58-Ն որոշման

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող, վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար է սահմանվում 20.000 դրամ:

2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար է սահմանվում՝ 5000 դրամ:

3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ յուրաքանչյուր մասնակցից վճար է սահմանվում 5000դրամ:

4. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ յուրաքանչյուր մեկ բնակչի հաշվով ամսեկան սահմանվում է 150 դրամ աղբահանության վճար.

5. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար վճար է սահմանվում՝ 1500 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 59

13/12/2013

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆՈՐ ԾՆՎԱԾ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արամուս համայնքի բյուջեի համապատասխան բաժնում նախատեսել և 2014 թվականի ընթացքում նոր ծնված հաշվառված երեխաների ընտանիքներին տալ դրամական օգնություն 10000(տաս հազար) դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Զեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ԵՂԻՇՅԱՆ ԱՇՈՏ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԳՈ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 60

13/12/2013

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՀԱՑՈՂԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արամուս համայնքի բյուջեի համապատասխան բաժնում նախատեսել և 2014 թվականի ընթացքում համայնքի բնակչի մահվան դեպքում մահացողի ընտանիքին տալ դրամական օգնություն 20000(քսան հազար) դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ԵՂԻՇՅԱՆ ԱՇՈՏ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԳՈ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 61

13/12/2013

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՄԵՆԱՄՅԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արամուս համայնքի բյուջեի համապատասխան բաժնում նախատեսել և համայնքում հաշվառված 1-ին կարգի հաշմանդամներին և հայրենական մեծ պատերազմի մասնակից վետերաններին 2014 թվականի ընթացքում տալ ամենամյա դրամական օգնություն 5000(հինգ հազար) դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ԵՂԻՇՅԱՆ ԱՇՈՏ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԳՈ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 62

13/12/2013

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԲՈՒՀ) ԳԵՐԱԶԱՆՑ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 11-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ պարբերության պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել պետական ԲՈՒՀ-երում 2013-2014թթ. ընթացքում սովորող գերազանցիկ ուսանողներին տալ դրամական օգնություն 100000 /մեկ հարյուր հազար/դրամի, իսկ ավագ դպրոցի 11-12 րդ դասարանների գերազանցիկ աշակերտներին 50000 /հիսուն հազար/դրամի չափով:
*2.*Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ԵՂԻՇՅԱՆ ԱՇՈՏ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԳՈ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 63

13/12/2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Անդամակցել "Հայաստանի Համայնքների միություն" իրավաբանական անձանց միությանը:
*2.*Համայնքի բյուջեում նախատեսել իրավաբանական անձանց միության անդամավճար 2014 թվականի համար մեկ բնակչի հաշվով 10/տաս/ դրամ մեկ տարվա համար:
*3.*Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ԵՂԻՇՅԱՆ ԱՇՈՏ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԳՈ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 64

13/12/2013

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԽԱՎԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արամուս համայնքի բյուջեի համապատասխան բաժիններում նախատեսել միջոցներ 2014 թվականի ընթացքում համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների՝ սոցիալական պայմանների բարելավման, առողջական խնդիրների լուծման և պետական բուհերում սովորող ուսանողների վարձավճարի ուղղությամբ տրվող համապատասխանաբար դրամական օգնությունների, բուժ. օգնությունների և ուսման վարձերի փոխհատուցման համար:
2.Դիմումների քննարկման և գումարների տրամադրման հարցերը թողնել համայնքի ղեկավարի և համայնքում ստեղծված սոցիալական օգնության հանձնաժողովի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ԵՂԻՇՅԱՆ ԱՇՈՏ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԳՈ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ԱՌՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 65-Ն

13/12/2013

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և, "Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արամուս համայնքի 2013 թվականի բյուջեն՝
1) Եկամուտների գծով (հատված 1) 73093.7 հազար դրամ
2) Ծախսերի գործառական դասակարգման (հատված 2) 73093.7 հազար դրամ
3) Ծախսերի տնտեսագիտական դասակարգման (հատված 3) 73093.7 հազար դրամ
4) Տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (հատված 4) 5000.0 հազար դրամ
5)Հավելուրդի օգտագործման ուղղությունները (հատված 5) 5000.0 հազար դրամ
6)Ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման (հատված 6) 73093.7 հազար դրամ
2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի սույն որոշմամբ հաստատված չափաքանակի 15%-ը:
3. Ֆոնդային բյուջեի ծախսերը կատարել հետևյալ հաջորդականությամբ՝
1)Տարեսկզբի մնացորդի հաշվին.
2)Ֆոնդային բյուջեի եկամուտների հաշվին.
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ԵՂԻՇՅԱՆ ԱՇՈՏ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԳՈ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Մ/Պ ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ